ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունները՝ ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր,

բացառիկ կարեւոր նշանակություն տալով արտադրությունում դժբախտ պատահարների արդյունքում տուժած քաղաքացիների իրավունքներին,

գիտակցելով արտադրական վնասվածքների կանխարգելման գործում ջանքերի միավորման անհրաժեշտությունը,

ղեկավարվելով աշխատանքի պահպանության բնագավառում համագործակցության մասին Համաձայնագրով, համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Սույն Համաձայնագրով սահմանվում է մյուս Կողմի տարածքում գործուղման մեջ ժամանակավորապես գտնվող աշխատողների հետ արտադրությունում տեղի ունեցած դժբախտ պատահարների քննության կարգը:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրում կիրառվող հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունը.

"դժբախտ պատահար"՝ վնասվածք, մասնագիտական սուր հիվանդություն (թունավորում), ջերմային հարված, այրվածք, ցրտահարություն, ջրախեղդում, էլեկտրական հոսանքի կամ կայծակի հարված, վթարի, հրդեհի, տարերային աղետի (երկրաշարժ, սողանք, ջրհեղեղ, փոթորիկ եւ այլն), կենդանիների, միջատների եւ բուսական ու կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչների հետ շփման հետեւանքով ստացած վնասվածքներ,

"գործատու"՝ անկախ սեփականության ձեւերից եւ գերատեսչական պատկանելությունից ձեռնարկություն, հաստատություն, կազմակերպություն կամ ֆիզիկական անձ, որի հետ աշխատողը գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ,

"գործուղում"՝ մյուս Կողմի տարածքում ծառայողական հանձնարարության կատարման համար գործատուի հանձնարարությամբ աշխատողների գործուղում:

ՀՈԴՎԱԾ 3

Յուրաքանչյուր դժբախտ պատահարի քննությունը, այդ թվում վնասվածքի մասին հաղորդման կարգը, քննության հանձնաժողովի ձեւավորումը, դրա աշխատանքի կազմակերպումը, դրանց հետ կապված ձեռնարկությունների, առողջապահության հաստատությունների, պետական հսկողության ծառայությունների եւ այլ շահագրգիռ կազմակերպությունների ու պաշտոնատար անձանց ծագած պարտականությունները, քննության կազմակերպման հետ կապված այլ հարցերի լուծումը իրականացվում է դժբախտ պատահարի պահին տուժողի գտնվելու վայրի Կողմի համապատասխան նորմատիվ ակտերով սահմանված կարգով:

Սույն Համաձայնագիրը տարածվում է Կողմերի անկախ սեփականության ձեւերից ձեռնարկությունների, հաստատությունների եւ կազմակերպությունների, ինչպես նաեւ ֆիզիկական անձանց վրա, որոնց հետ աշխատողը գտնվում է աշխատանքային հարաբերությունների մեջ:

ՀՈԴՎԱԾ 4

Ծանր, խմբակային, ինչպես նաեւ մահացու ելքով դժբախտ պատահարների քննությունը կատարվում է գործատուի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Բացառիկ դեպքերում գործատուն կարող է հանձնարարել, որ քննությանը մասնակցի այն Կողմի վստահելի անձը, որի տարածքում գտնվում է տուժողը:

ՀՈԴՎԱԾ 5

Սույն Համաձայնագրին համապատասխան քննվող դեպքերի համար Կողմերը հաստատում են արտադրությունում դժբախտ պատահարների մասին Ակտի համաձայնեցված ձեւը (Н-1М ձեւ), որը կցվում է սույն Համաձայնագրին եւ հանդիսանում է նրա անբաժանելի մասը: Նշված Ակտի ձեւակերպումը հանդիսանում է այն ձեռնարկության պարտականությունը, որտեղ տեղի է ունեցել դժբախտ պատահարը: Ակտը ձեւակերպվում է այն Կողմի պետական լեզվով, որի տարածքում տեղի է ունեցել դժբախտ պատահարը եւ ռուսերենով: Քննության բոլոր նյութերը (ներառյալ Н-1М ձեւի Ակտը, որը տուժողի խնդրանքով հանձնվում է նրան կամ նրա շահերը ներկայացնող անձին) քննության ավարտից հետո պարտադիր կարգով ուղարկվում են գործատուին, իսկ խմբակային եւ մահացու ելքով դժբախտ պատահարների նյութերը՝ նաեւ տուժողի մշտական աշխատանքի վայրի Կողմի աշխատանքի պահպանության օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողության պետական մարմնին:

ՀՈԴՎԱԾ 6

Ձեռնարկությունը, որտեղ տեղի է ունեցել դժբախտ պատահարը, պարտավոր է կազմակերպել տուժողին առաջին բժշկական օգնության ցուցաբերումը, ամբուլատոր կամ, անհրաժեշտության դեպքում, ստացիոնար բուժումը (հոսպիտալացումը): Աշխատողի մահվան դեպքում տվյալ ձեռնարկությունը տեղեկացնում է այդ մասին աշխատողի մշտական բնակության Կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությանը՝ մահվան փաստեր ներկայացնելով եւ գործադիր իշխանության տեղական մարմինների հետ համատեղ օժանդակություն է ցուցաբերում գործատուի ներկայացուցիչներին եւ տուժողի հարազատներին՝ մահացածի մարմնի եւ անձնական գույքի փոխադրման, ինչպես նաեւ այլ անհրաժեշտ դեպքերում: Դրանց հետ կապված ծախսերը հոգում է այն Կողմի ձեռնարկությունը, որի տարածքում տեղի է ունեցել դժբախտ պատահարը:

ՀՈԴՎԱԾ 7

Սույն Համաձայնագրում նշված արտադրությունում դժբախտ պատահարի հետ կապված աշխատողին հասցված վնասի փոխհատուցման, ինչպես նաեւ նման դժբախտ պատահարի համար մեղավոր ձեռնարկության կողմից ծախսերի փոխհատուցման մասով հակընդդեմ հայցի բավարարման կարգը սահմանվում է Կողմերի միջեւ կնքվող առանձին համաձայնագրով:

ՀՈԴՎԱԾ 8

Մյուս Կողմի տարածքում աշխատանքային կամ այլ պայմանագրի հիման վրա գտնվող աշխատողների հետ արտադրությունում տեղի ունեցած դժբախտ պատահարները քննվում են պայմանագրի կնքման վայրի Կողմի օրենսդրությամբ սահմանված կարգին համապատասխան:
Այդ դեպքերում տուժողի առողջության վնասի փոխհատուցումը կատարվում է "Աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությունը այլ կերպ վնասած աշխատողներին պատճառված վնասի փոխհատուցման իրավունքները փոխադարձաբար ճանաչելու մասին" 1994 թվականի սեպտեմբերի 9-ի Համաձայնագրին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագրի իրականացման նպատակներով մի Կողմի տարածքում սահմանված ձեւով տրված փաստաթղթերը կամ դրանց հաստատված պատճենները մյուս Կողմերը ընդունում են առանց օրինականացման:

ՀՈԴՎԱԾ 10

Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից առնվազն մեկ ամսվա ընթացքում կորոշի Լիազոր մարմնին (մարմինները), որի վրա կդրվի դրա իրականացումը:

ՀՈԴՎԱԾ 11

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը լուծվում են շահագրգիռ Կողմերի Լիազոր մարմինների միջեւ բանակցությունների եւ այլ հանրաճանաչ միջոցներով, ներառյալ Կողմերից որեւէ մեկի խնդրանքով ստեղծվող հանձնաժողովները:

ՀՈԴՎԱԾ 12

Փոխադարձ պայմանավորվածությամբ, Կողմերը սույն Համաձայնագրում կարող են կատարել անհրաժեշտ լրացումներ եւ փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով եւ հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ մասնակից պետությունների ներպետական ընթացակարգերի կատարման մասին երեք Կողմերի ծանուցումները ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ միանալու մասին փաստաթղթերը ավանդապահին փոխանցելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով եւ ամեն անգամ ինքնաբերաբար կերկարաձգվի մեկ տարի ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է հայտարարել սույն Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին՝ համապատասխան ժամանակաշրջանի ավարտից առնվազն վեց ամիս առաջ ավանդապահին այդ մասին գրավոր ծանուցելով:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի դեկտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

Հավելված
Բնակության պետությունից դուրս
գտնվող աշխատողների հետ
արտադրությունում դժբախտ

պատահարների քննության կարգի
մասին 1994 թվականի դեկտեմբերի
9-ի՝ Համաձայնագրին կից

Н-1М ձեւ

Հաստատում եմ
Ձեռնարկության ղեկավար
_____
(ստորագրություն, անուն, ազգանուն, հայրանուն)

" " 199_ թվական

Կնիքի տեղը

ԱԿՏ

արտադրությունում դժբախտ պատահարի մասին

Կոդեր
1. Ձեռնարկության անվանումը, գրանցման համարը _____
1.1. Պետություն _____
1.2. Ձեռնարկության հասցեն.
Շրջան _____
Քաղաք, փողոց, շենք/տուն _____
Բանկային տվյալներ _____
1.3. Սեփականության ձեւը (պետական, քաղաքային, մասնավոր եւ այլն)
_____
1.4. Դժբախտ պատահարի վայրը _____
2. Տնտեսության ճյուղը (նախարարություն, գերատեսչություն) _____
3. Աշխատողին ուղարկած ձեռնարկությունը (պետություն, ձեռնարկության անվանում, հասցե, բանկային տվյալներ, տնտեսության ճյուղ, նախարարություն, գերատեսչություն) _____
4. Տուժողի անունը, ազգանունը, հայրանունը _____
5. Սեռը՝ իգական, սեռական (ընդգծել) _____
6. Տարիքը (նշել լրացած տարիքը) _____
7. Մասնագիտություն, պաշտոն _____
կարգ _____
8. Տվյալ մասնագիտության, որի կատարման ժամանակ տեղի է ունեցել դժբախտ պատահարը, աշխատանքային ստաժը _____
9. Աշխատանքի անվտանգության հրահանգավորում, ուսուցում (անցկացման ժամկետը) _____
9.1. Ներածական հրահանգավորում _____
9.2. Աշխատանքի անվտանգության ուսուցում _____
9.3. Նախնական (կրկնվող) հրահանգավորում _____
9.4. Բարձր վտանգավորության աշխատանքների համար գիտելիքների ստուգում
_____
9.5. Նախնական եւ պարբերաբար բժշկական ստուգումների անցկացում
_____
10. Դժբախտ պատահարի օրը եւ ժամը (տարին, ամիսը, օրը, ժամը, աշխատած ժամերը) _____
11. Դժբախտ պատահարի հանգամանքները _____
11.1. Պատճառները _____
11.2. Վնասվածքի պատճառ հանդիսացած սարքավորումը (անվանում, տեսակ,

թողարկման տարեթիվ, թողարկող ձեռնարկություն) _____
11.3. Ոգելից խմիչքի կամ թմրադեղերի ազդեցությունը տուժողի վրա (համաձայն բժշկական եզրակացության) _____
11.4. Ախտորոշում (նախնական, վերջնական) _____
12. Դժբախտ պատահարի պատճառների վերացման միջոցառումները

հհ.	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետը	Կատարողը	Նշում կատարման մասին

13. Աշխատանքի պահպանության նորմատիվ ակտերի խախտումներ թույլ տված անձինք (անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն, ձեռնարկության անվանում)_____
_____
նրանց խախտած նորմատիվ փաստաթղթերի հոդվածներ, պարբերություններ, դրույթների կետեր _____
14. Դժբախտ պատահարի ականատեսներ _____

Ակտը կազմված է (օր, ամիս, տարի) _____
Աշխատանքի պահպանության ծառայության ղեկավար (մասնագետ) (ստորագրություն, անուն, ազգանուն, հայրանուն, պաշտոն) _____
Աշխատանքի պահպանության աշխատանքային կոլեկտիվի (արհմիության) լիազոր (ստորագրություն, անուն, ազգանուն, հայրանուն) _____
_____
Ստորաբաժանման ղեկավար (ստորագրություն, անուն, ազգանուն, հայրանուն)
_____

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թվականի մարտի 10-ից: